

ՏԵՂԵԿԱՆՔ

Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետայի հարցերի մշտական հանձնաժողովի 7-րդ գումարման 6-րդ նստաշրջանի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

1. Կայացած նիստերի քանակը կազմել է 23-ը՝ 9 հերթական, 2 արտահերթ և 12՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների հետ համատեղ նիստեր («Հայաստանի Հանրապետության 2020 թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության նախնական քննարկումների):

2. Հանձնաժողովը գլխադասային է նշանակվել՝ **27 օրենքի նախագծի** (որոնցից՝ 2 օրենքների նախագծերի փաթեթներ)՝ ընդունվել են ամբողջությամբ՝ 8, դուրս է եկել շրջանառությունից՝ 15, դեռևս չեն ընդգրկվել օրակարգում՝ 1, ընդգրկվել են օրակարգում՝ 3 (որոնցից քննարկվել է և քվեարկվել է 1-ին ընթերցմամբ՝ 2), **1 համաձայնագրի** (հաստատվել է), **2 հաղորդում** (որոնցից քննարկվել և ընդունվել է ի գիտություն 1, 2-րդը՝ քննարկվել է հանձնաժողովի նիստում) :

3. Նիստերի ընթացքում քննարկվել են՝

3.1. Օրենքների նախագծեր՝ թվով 17, որոնցից.

➤ 8 ընդունվել են ամբողջությամբ՝

- 1) Խ-401. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին, Հեղինակ՝ «Լուսավոր Հայաստան» խմբակցություն (Հիմնական զեկուցող՝ Արկադի Խաչատրյան),
- 2) Խ-401.¹ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին
- 3) Խ-401.² «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին
- 4) Պ-703. «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին Հեղինակներ՝ Եղիշե Սողոմոնյան, Արտակ Մանուկյան, Տիգրան Ուլիխանյան, Վարդան Աթաբեկյան, Համազասպ Դանիելյան, Երջանիկ Հակոբյան (Հիմնական զեկուցող՝ Եղիշե Սողոմոնյան)
- 5) Կ-846. «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին
- 6) Պ-763. «Բանկային ավանդների ներգրավման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, Հեղինակներ՝ Արտակ Մանուկյան, Բարկեն Թունյան (Հիմնական զեկուցող՝ Արտակ Մանուկյան)
- 7) Պ-763¹ «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին
- 8) Պ-763² «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին

➤ 2 ընդգրկվել են օրակարգում, քննարկվել եւ ընդունվել են 1-ին ընթերցմամբ՝

- 1) «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին, Հեղինակ՝ ՀՀ կառավարություն, Կ-887-03.03.2021-ՖՎ-011/1,

- 2) «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», ՀՀ կառավարություն, Կ-897-12.03.2021-ՖՎ-011/1:

➤ **5 դուրս են եկել շրջանառությունից՝**

- 1) Կ-615. «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», Հեղինակ՝ ՀՀ կառավարություն,
- 2) Պ-666. «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», Հեղինակներ՝ Արտակ Մանուկյան, Վարդան Աթաբեկյան, Համազասպ Դանիելյան, Երջանիկ Հակոբյան, Տիգրան Ուլիխանյան, Եղիշե Սողոմոնյան
- 3) Պ-834. «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, Հեղինակներ՝ Արտակ Մանուկյան, Նարեկ Զեյնալյան
- 4) Պ-835. «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին, Հեղինակ՝ Արտակ Մանուկյան
- 5) Պ-837. «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին, Հեղինակներ՝ Արտակ Մանուկյան, Կարապետ Մխչյան, Կարեն Գրիգորյան, Համազասպ Դանիելյան, Եղիշե Սողոմոնյան

➤ **2 քննարկվել են հանձնաժողովի նիստում, ստացել են դրական եզրակացություն, սակայն չեն քննարկվել ԱԺ հերթական նիստում քվորում չլինելու պատճառով՝**

- 1) Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին, Հեղինակ՝ Կառավարություն, Կ-955-29.04.2021-ՖՎ-012/0,
- 2) «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում լրացում կատարելու մասին, Հեղինակ՝ ՀՀ կառավարություն, Կ-988-31.05.2021-ՖՎ-011/0

3.2. Հաղորդումներ՝ թվով 2, որոնցից.

- 1 քննարկվել և ընդունվել է ի գիտություն՝
956. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը, Հեղինակ՝ ՀՀ կենտրոնական բանկ,
- 2-րդը քննարկվել է հանձնաժողովի նիստում, սակայն չի քննարկվել ԱԺ հերթական նիստում քվորում չլինելու պատճառով՝
989. Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2020 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդում:

3.3. Տեղեկանքներ /թվով 4/.

- 1) 2020 թվականի պետական բյուջեի առաջին կիսամյակի կատարման ընթացքի վերաբերյալ,

- 2) 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման ընթացքի վերաբերյալ,
- 3) Բյուջետային գրասենյակի 2020 թվականի տարեկան հաշվետվությունը կատարած աշխատանքների վերաբերյալ,
- 4) Բյուջետային գրասենյակի հաշվետվությունը՝ 2021 թվականի առաջին եռամսյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

3.4. Չեկույց.

- 1) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 2020 թվականի կատարման ընթացքի և արդյունքների մասին» զեկույցի քննարկում:

3.5. «Հայաստանի Հանրապետության 2020 թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվություն և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2020 թվականի վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների կատարման տարեկան հաշվետվություն /թվով 12 նիստ/ (Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների հետ համատեղ նախնական քննարկումների կազմակերպում և իրականացում):

3.6. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի համաձայն՝

- 1) Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի անդամի թեկնածության և Ազգային ժողովին այդ պաշտոնին թեկնածու առաջարկելու վերաբերյալ քննարկում (Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատի անդամի թափուր տեղի համար Ազգային ժողովին առաջարկեց "Իմ քայլ" խմբակցության կողմից ներկայացված Գեղամ Ազատի Հովեյանի թեկնածությունը):

4. Հանձնաժողովը 6-րդ նստաշրջանի ընթացքում (2021 թվականի՝ հունվար - հունիս) ունեցել է 5 ընդունելություն, յուրաքանչյուր ամիս մեկ անգամ. ընդհանուր 23 քաղաքացի:

5. ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվել է ԱԺ կայքի հանձնաժողովի էլեկտրոնային էջում: